Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 05

Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի հեռակա արտահերթ նիստի

ք. Երևան 21 դեկտեմբերի 2020թ.

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Կառավարման խորհրդի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 15-ի N 13-Լ որոշմամբ և հիմք ընդունելով 2019 թվականի օգոստոսի 8-ի ՀՀ կառավարության N 1000-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 7-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերը, կայացել է՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի (այսուհետ՝ Կառավարման խորհուրդ) արտահերթ նիստ:

Համաձայն 2019 թվականի օգոստոսի 8-ի ՀՀ կառավարության N 1000-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 19-րդ կետի՝ եթե էլեկտրոնային կարգով քվեարկել է խորհրդի անդամների 2/3-ից ավելին, ապա քվեարկությունը կհամարվի կայացած:

Էլեկտրոնային կարգով քվեարկել է՝

Ռոմանոս Պետրոսյան	ՀՀ շրջակա միջավայրի նախարար (խորհրդի նախագահ)
Սուրեն Պապիկյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար
Արթուր Ասոյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար
Ավագ Ավանեսյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Արման Պողոսյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Վահե Դանիելյան	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Մարատ Գրիգորյան	Հայաստանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան
Գևորգ Բալումյան	Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ընդերքաբանության և շրջակա միջավայրի պահպանության ամբիոնի դոցենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու
Պերճ Խաչատրյան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն

ՕՐԱԿԱՐԳ

Հարց

«Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 733-Լ որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշման նախագծին հավանություն տալու վերաբերյալ:

Էլեկտրոնային քվեարկությամբ Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

«Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 733-Լ որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշման նախագծին հավանություն տալու վերաբերյալ:

Կողմ-8, Դեմ-1

Խորհրդի դիտարկումները.

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի անդամ Պերճ Խաչատրյանը քվերարկել է ԴԵՄ՝ ներկայացնելով իր դիտարկումը՝ գտնում եմ, որ տվյալ փոփոխությունը և դրա հիմքում դրված օրենսդրական կարգավորումները չեն բխում տնտեսական գործունեության ազատության ապահովման սահմանադրական պահանջներից, լրացուցիչ հնարավորություններ են ստեղծում տնտեսվարող սուբյեկտների գործունեությանը միջամտելու, տեսչական մարմնի պաշտոնատար անձանց համար սահմանվում է հայեցողականության լայն շրջանակ, հիմքեր է ստեղծում կամայականության և վարչական լծակների չարաշահման, ինչը կարող է խիստ անբարենպաստ ազդեցություն ունենալ:

Էլեկտրոնային քվեարկությամբ որոշումը ընդունվել է ձայների պարզ մեծամասնությամբ:

ՀՀ շրջակա միջավայրի նախարար (խորհրդի նախագահ)_____ Ռ.Պետրոսյան

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի
իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության
վարչության պետ (խորհրդի քարտուղար) _____ Հ. Բարսեղյան